

## Ֆինանսական ճգնաժամ. այն դեռևս նո՞ր է սկսվում

Ինչպես մեկ անգամ ասել է Մարկ Թվենը՝, եթե դուք թերթ չեք կարդում, ապա տեղեկացված չեք, իսկ եթե թերթ եք կարդում, ուրեմն ապատեղեկացված եք: Այնուամենայնիվ, անգամ այն մարդկանց, ովքեր չեն հետևում լուրերին, անակնկալի չի բերի այն փաստը, որ լուրջ ֆինանսական ճգնաժամը չի շրջանցել ոչ մեկին: Թերթերի և ինտերնետ-կայքերի ընթերցողներն ընկղմվում են եղելության մասին պատմող տեղեկատվության հոսքի մեջ, ինչը շփոթմունք և հոռետեսություն է առաջ բերում նրանց մեջ: Բոլորին հուզում է միայն մեկ հարց. արդյոք ամեն ինչ այնքան լուրջ է, որքան այն ներկայացնում է մամուլը, և ինչ է լինելու հետո:

Մինչդեռ մամուլին ձեռնտու է խտացնել գույները և հոռետեսական կանխատեսումներ անել՝ խաղարկելով ընթերցողների միամտությունը և տեսարանների հանդեպ ծարավը: Իրականում ճգնաժամի պատճառների, ինչպես նաև ապագայի հնարավոր զարգացումների խորը վերլուծության պակաս կա. այս թեմայով հոդվածները սովորաբար չեն հիմնվում ոչ վաղ անցյալի, ոչ էլ հեռավոր ապագայի վրա:

Ամենից հաճախ ֆինանսական ճգնաժամի պատճառ են անվանում երկու հույզեր՝ վախը և ազահությունը: Ամեն ինչում մեղադրում են Ուոլ-Սթրիթի խեղճ ու ազահ բանկիրներին: Սրան ավելացվում է այն փաստը, թե ճգնաժամերը միշտ էլ ուղեկցել են կապիտալիզմը, որ դրանք պարբերաբար՝ 100 տարին մեկ, տեղի են ունեցել անցյալում և տեղի կունենան նաև ապագայում: Որոշ փորձագետներ գտնում են, որ երկարաժամկետ հեռանկարում հիմա ճիշտ ժամանակն է բաժնետոմսեր գնելու համար: Ցավոք, ներդրումը ֆոնդային շուկաներում երբեք էլ այնքան հեշտ չի լինում, որքան թվում է սկզբնապես: Հակառակ դեպքում բոլորն անասելի հարուստ կլինեին: Չի կարելի մոռանալ նաև գնաճի և փողերի գնողունակության անկման մասին: Բացի այդ, ֆինանսական հանդեսներում երբեք չի նշվում այն փաստը, որ աշխարհի խոշորագույն ընկերությունները և բանկերը կարող են սնանկանալ, ինչպես նաև հավանականությունը, որ բաժնետերերի ակտիվները կարող են լիովին զրոյացվել: Խոշոր ընկերությունների և բանկերի սնանկացումը դիտարկվում է միայն որպես տեսական հնարավորություն և ավելի շուտ դասվում է տնտեսագիտության դասագրքից բերված աբստրակտ օրինակների շարքին:

Ինչ վերաբերում է ճգնաժամի հիմնարար պատճառներին՝ դրանք ոչ վախ՛ն են, ոչ էլ ազահությունը: Այս ճգնաժամը ընդհանուր ոչինչ չունի նաև հոտային բնագծի հետ, որն,

այնուամենայնիվ, նպաստել է վերջինիս խորացմանը: Ճգնաժամի նախապատմությունն ավելի լավ հասկանալու համար հարկավոր է նախ վերլուծել անցյալը: Ցավոք, այն դժվար է ամբողջությամբ դիտարկել համակարգի ներսից, տեսանելի են միայն առանձին խնդիրներ, որոնք և մենք փորձում ենք շտկել՝ իրականում չտեսնելով ընդհանուր պատկերը: Մինչդեռ որոշ փորձագետներ վստահեցնում են, որ ողջ գլոբալ արժույթային համակարգը կառուցված է խարխլուն հիմքի վրա և ներկայիս ֆինանսական ճգնաժամը ու դրան հաջորդած տնտեսական ճգնաժամն օբյեկտիվորեն անխուսափելի էին...

Իշխանությունների ներկայիս փորձերը նախ և առաջ ներկայացնում են իրերի նախկին դրությունը պահպանելուն ուղղված ձգտում, անկայունը պահպանելու և կայունացնելու ցանկություն:

Ցավոք, հաճախ առկա իրադրությունը վերլուծելիս՝ դրամավարկային պատմամական փորձը պարզապես արհամարհվում է: Պատմության ողջ ընթացքում բոլոր խոշորագույն արժույթային համակարգերն այս կամ այն կերպ կապված են եղել ոսկու, արծաթի կամ որևիցե այլ իրական ակտիվի հետ: Հենց փողերը վերածվում էին թղթադրամի կամ պղնձի կտորի, համակարգը դատապարտվում էր կործանման:

1971-ին համաշխարհային ֆինանսական պատմության մեջ առաջին անգամ ոչ մի արժույթ ոչնչով ապահովված չէր: Այս դրամական փորձը համարձակ կարելի է փորձարկում անվանել, որը մեր օրերում հասավ իր տրամաբանական ավարտին: Եթե փողերը պետական կնիքներից և վճռական խոստումներից բացի ոչնչով ապահովված չեն, ապա խաղի մեջ է մտնում ազահությունը: Աշխարհում և ոչ մի բանակ չկարողացավ խոչընդոտել կենտրոնական բանկերին և կառավարություններին օդից փող ստեղծելու, և ապա դրանք ըստ սեփական ցանկության ծախսելու գործում:

Այս ամենը բնորոշող ժամանակակից եզրույթ է հանդիսանում «վարկային փողեր» ասվածը: Նորմալ և կայուն համակարգերում բանկիրները հատկացնում էին այնքան վարկային փողեր, որքան ունեին իրենց գանձարաններում և մշտապես պատրաստ էին փոխանակելու տրամադրած թղթադրամները բանկի չիրկիզվող պահարաններում պահվող ոսկե ձուլակտորների հետ: Սակայն եկան ժամանակներ, երբ բանկիրները հասկացան, որ մարդիկ փողի դիմաց ոսկի չեն խնդրում, ինչի արդյունքում նրանք փորձեցին տրամադրել արժեզուրկ թղթի կտորներ և տեսան, որ սարսափելի ոչինչ տեղի չունեցավ, գոնե սկզբնական փուլում: Հին ժամանակներում գործը

կավարտվեր այդպիսի բանկի սնանկացմամբ կամ էլ գերզնաճի հետևանքով պետական դրամավարկային համակարգի ոչնչացմամբ:

Մեր օրերում ամբողջ դրամական համակարգը գլոբալ բնույթ է կրում, սակայն, ապահովված չլինելով համընդհանուր ճանաչում ունեցող որևէ համարժեքով, այն չի կարող հարատևել: Այդուհանդերձ, «Նորվիկի» վերլուծաբանները գտնում են, որ ֆինանսական ճգնաժամն այսօրվա դրությամբ կարող է պարզապես խթան հանդիսանալ համաշխարհային ֆինանսական համակարգի վերափոխման և վերջինիս վերածնման համար:

Կարևոր հարց է նաև այն, թե ինչ է լինելու հետո: Այստեղ հարկ է հաշվի առնել մարդկային հոգեբանությունը: Մարդիկ հակված են դիտարկել մի շարք երևույթներ կարճաժամկետ հեռանկարում: Չնայած նրան, որ ճգնաժամն արդեն իսկ կանխատեսում էին 1990-ականների վերջերին՝ ֆինանսական վերլուծաբանները գերադասում էին «գլուխը թաքցնել հողի մեջ» և տնտեսության ներկայիս դրությունը որակել որպես լավ: Վերլուծության այս տեսակը հիշեցնում է մի անեկդոտ այն մասին, թե ինչպես է մարդն ընկնում երկնաքերից, և երբ նրան հինգերորդ հարկի պատուհանից ինչ-որ մեկը հարցնում է, թե ինչպես են նրա գործերը, վերջինս պատասխանում է՝ «առայժմ ամեն ինչ լավ է, պարզապես ես չափազանց արագ եմ թռչում»: Այսօրվա դրությամբ բազմաթիվ փորձագետներ շարունակում են հաշվից դուրս մղել ճգնաժամի շարունակականության և վերջինիս զարգացման տարբեր փուլերի թեմայով տեսական տարակարծությունները:

Ճգնաժամի երկրորդ փուլը սովորաբար տնտեսության վրա բացասական ազդեցություն է թողնում: Ներկայիս տնտեսական համակարգը կառուցված է գնալով աճող քանակությամբ փոխառությունների տրամադրման, այլ ոչ թե խնայողությունների և պարտքերի մարման վրա: Եթե մասնավոր անձն իր կյանքը կառուցում է՝ հիմնվելով մի շարք նոր վարկերի վրա, որտեղ հին պարտքերի մարումը կատարվում է նոր պարտքերի հաշվին, նա վաղ թե ուշ կսնանկանա: Նույնը տեղի է ունենում առավել գլոբալ մակարդակով:

Փողերի բացակայությունը ակնհայտ է դառնում ճգնաժամի երկրորդ փուլում, երբ ֆինանսական ճգնաժամը վերածվում է տնտեսականի՝ աշխարհով մեկ շղթայական ռեակցիայի տեսքով հանգեցնելով զանգվածային սնանկացումների: Եթե առաջին փուլում նախնական դժվարությունների շարքին, որոնց բախվել են տների փոխառությունները և շինարարական ընկերությունները, չէին հաջորդել սնանկացումները արտադրության, փոխադրումների, ԶԼՄ-ների,

սննդի արդյունաբերության ոլորտներում, դեռ չխոսելով այնպիսի շքեղությունների մասին, ինչպիսիք են էքսկյուզիվ ավտոմեքենաները, զբոսանավերը կամ ժամացույցները, ապա ճգնաժամի երկրորդ փուլում գործազրկությունը սկսում է բարձրանալ սնկանկացումների ալիքի հետ միասին:

Ճգնաժամի երրորդ փուլը հանդիսանում է հիպերինֆլացիան: Գերզնաճի շրջանում մարդիկ կգիտակցեն, որ իրենց ունեցած գումարով հաջորդ ամիս կկարողանան գնել երկու անգամ ավելի քիչ ապրանք, քան այս ամիս: Իրադարձությունների նման զարգացումը մարդկանց հարկադրում է գնել պիտանի և անպիտան ամեն ինչ, այնքան ժամանակ, քանի դեռ կա մի բան, որը հնարավոր կլինի փոխանակել իրենց գումարով թղթի կտորներով, իսկ ձեռնարկություններն այլևս չեն ցանկանա վաճառել իրենց արտադրանքը, քանի որ վաճառքի դիմաց ստացված փողերը բավարար չեն լինի նոր հումք գնելու համար: Երրորդ փուլի մանրամասները դժվար է կանխատեսել: Հստակ է միայն մեկ բան. քաղաքական գործիչները կփորձեն ընդունել մի շարք կարևոր օրենքներ, գները կլինեն ֆիքսված, աշխատավարձերը՝ կանոնակարգված, արտարժույթով հաշիվները կսառեցվեն, մի խոսքով՝ այն ամենն ինչ պետք է արվի, կարվի:

Եվ վերջապես եզրափակիչ փուլը արժույթային փլուզումն է: Այն դեպքում, եթե ժողովրդավարությունը գոյատևի, կսկսվի չորրորդ և եզրափակիչ փուլը, որը կարելի է անվանել խավար լուսաբացից առաջ: Դա կլինի դրամավարկային և ֆինանսական համակարգի վերջնական փլուզումը, բոլոր տեսակի էլեկտրոնային և ֆինանսական արժեքների կորուստ, որը կուղեկցվի աշխարհի մեծ մասի երկրներում դրամական բարեփոխումներով: Վատագույն դեպքում դա կհանգեցնի համաշխարհային կառավարության ստեղծմանը, իսկ լավագույն դեպքում այս գործընթացը յուրաքանչյուր երկրում կընթանա առանձին: Դարձյալ մասնավոր անձինք կհայտնվեն պարտվողների դերում, մինչդեռ իրավաբանական անձինք՝ իրենց պարտքերով և գրավներով հանդերձ, կկորեն վիրտուալ աշխարհում:

Այս վերջին փուլի ավարտին ամեն ինչ կսկսվի զրոյից: Ոչ, երկաթուղիները և ինքնաթիռները, կամուրջները և տները ոչ մի տեղ չեն անհետանա: Բոլոր իրական հարստությունները կպահպանվեն, կկորչեն միայն թղթի վերածված հարստությունները, այն իրերը, որոնք մարդիկ կարծում էին, թե ունեին կամ էլ թե մեկ ուրիշը (կառավարությունը, բանկերը, թոշակային հիմնադրամները և այլն) պահում էր դրանք իր համար:

Բնական է, որ ներկա պահին այս և այլ բոլոր տեսակի կանխատեսումները կարող են դիտվել միայն որպես վարկածներ: Պարզ է մեկ բան. ցանկացած գործընթաց պետք է անցնի իր պատմական զարգացման ողջ ուղին սկզբից մինչև վերջ և պետք է հասնի իր բնական ավարտին: Պատմությունը ցույց է տալիս, որ հասարակության կազմավորման մի տեսակից մյուսին ցանկացած անցում չափազանց ցավոտ է լինում: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր հաջորդող քայլ, որքան էլ այն ցավոտ լինի, նպաստում է մարդկության առաջխաղացմանը և մարդկության մեծամասնությանն ավելի լավ կյանք է առաջարկում: Հույս ենք հայտնում, որ այս անգամ էլ այդպես կլինի: Մեզ ընդամենը հարկավոր է ևս փոքր-ինչ դիմանալ:

«Նորվիկ» ՈՒՎԿ ՓԲԸ վերլուծական բաժին